# Արձանագրություն N 1/138

## ԵՊՀ Միջազգային հարաբերությունների ֆակուլտետի գիտական խորհրդի 2014թ-ի սեպտեմբերի 30-ի նիստի

Օրակարգ

1. Տարբերակված հավելավճարների հարցը /զեկ.՝ պրոֆ. Գ. Պետրոսյան/:
2. Ամբիոնների և դեկանատի աշխատանքը ստուգելու համար համապատասխան հանձնաժողովի ձևավորման հարցը /զեկ. պրոֆ. Գ.Պետրոսյան/:
3. Կիսամյակային առարկայական հարցաշարերի ժամանակին ներկայացման հարցը / զեկ.՝ պրոֆ. Գ. Պետրոսյան/:
4. Ամբիոնների ուսումնական ծանրաբեռնվածության հարցը:
5. Լուծարքային քննաշրջանի ամփոփման հարցը:
6. Դասախոսների գործուղման հարցը:
7. Ատենախոսության թեմաների ղեկավարների փոփոխման հարցը /զեկ. դոց՝. Խ.Գալստյան:
8. Պրոֆեսորի կոչման համար ՀՀ ԲՈՀ-ի սահմանված կարգով մրցույթին մասնակցության երաշխավորության հարցը /զեկ.՝ դոց. Խ. Գալստյան/:
9. Ընթացիկ հարցեր. ա/ասպիրանտուրայում ուսումը շարունակելու երաշխավորության հարցը, բ/ Ֆակուլտետի մեթոդխորհրդի նախագահի փոփոխման հարցը:

Խորհուրդը որոշեց.

1. Ի գիտություն ընդունել ԵՊՀ Միջազգային հարաբերությունների ֆակուլտետի դեկանի հաղորդումը ԵՊՀ գործող կանոնակարգի համաձայն տարբերակված հավելավճարների ձևավորման կարգի մասին:
2. ա/Ամբիոնների և դեկանատի աշխատանքը և նիստերի արձանագրությունները ստուգելու համար ձևավորել հանձնաժողով հետևյալ կազմով՝ Վարդանյան Լյուդվիգ, Գալստյան Նարեկ, Սարգսյան Հայկ:
   բ/ Մեկշաբաթյա ժամկետում դեկանին ներկայացնել ստուգման արդյունքները գիտական խորհրդի հաջորդ նիստում արդյունքները հրապարակելու համար:
3. Հանձնարարել ամբիոնի վարիչներին հետևել քննական առարկաների հարցաշարերը ժամանակին ներկայացման և ֆակուլտետի կայքում տեղադրման գործընթացին:
4. ա/ Բավարարել ֆակուլտետի մեթոդխորհրդի նախագահ Ռ. Վանեսյանի հրաժարականի խնդրանքը,
   բ/ Ֆակուլտետի մեթոդխորհրդի նախագահ ընտրել Լյուդվիգ Վարդանյանին:
5. ա/ ԵՊՀ Միջազգային հարաբերությունների ֆակուլտետի ասիստենտ Շիրակ Թորոսյանի թեկնածուական ատենախոսության գիտական ղեկավար հաստատել պրոֆ. Գ. Պետրոսյանին,

բ/ Հեռակա ուսուցմամբ 3-րդ տարվա ասպիրանտ Գոռ Թովմասյանի թեկնածուական ատենախոսության գիտական ղեկավար հաստատել պրոֆ. Գ. Պետրոսյանին:

7.ա/ Ընտրել հաշվիչ հանձնաժողով և քվեաթերթիկում գրանցել պրոֆեսորի կոչման համար պատմ. գիտ. դոկտոր Արմենակ Մանուկյանի անունը:

բ/ Անցկացնել փակ գաղտնի քվեարկություն: Փակ գաղտնի քվեարկությունից հետո գիտական խորհրդի նիստը հաստատեց հաշվիչ հանձնաժողովի հաշվետվությունը, ըստ որի խորհրդի 21 անդամներից քվեարկությանը մասնակցել են 18-ը և ձայները բաշխվել են հետևյալ կերպ՝

**Մանուկյան Արմենակ – 18 կողմ, դեմ չկա, անվավեր քվեաթերթիկ չկա:**

*Խորհրդի նախագահ, պրոֆ.* *Գ. Պետրոսյան*

*Խորհրդի քարտուղար, դոց.* *Խ. Գալստյան*